ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» --------- 2018թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի հ.87-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ «Էլիտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող և տարածագնահատման 4-րդ գոտում գտնվող Արաբկիր հ.41 փողոցի հ.31/1 հասցեի հողամասից 50.52 քմ մակերեսով հողամասը, Արաբկիր հ.41 փողոցի հ.31 հասցեի հողամասից 101.66քմ և Հյուսիսային ճառագայթ հ.26 հասցեի հողամասից 160.0քմ մակերեսով հողամասերը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.հ.2760049, 2760048, 2176837 վկայականներ) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ հարակից տարածքում և տարածագնահատման 4-րդ գոտում գտնվող 312.18 քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավագանու սույն որոշման նախագծով նախատեսվում է «Էլիտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Արաբկիր հ.41 փողոցի հ.31/1 հասցեի հողամասից 50.52քմ մակերեսով հողամասը, Արաբկիր հ.41 փողոցի հ.31 հասցեի հողամասից 101.66քմ և Հյուսիսային ճառագայթ հ.26 հասցեի հողամասից 160.0քմ մակերեսով հողամասերը փոխանակել հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 312.18քմ մակերեսով հողամասի հետ:

«Էլիտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող և անմիջապես իրար կից հարևանությամբ գտնվող նշված հողամասերն ունեն անկանոն և սեպաձև կառուցվածք:

Հողամասերի փոխանակության արդյունքում նոր ուրվագծով ձևավորվող հողամասերի դիրքը հնարավորություն կտա փաստացի տեղանքում ապահովել քաղաքաշինական առումով առավել կանոնակարգված իրավիճակ, ինչը կնպաստի ճանապարհային գոտու և ընդհանուր օգտագործման տարածքների ձևավորմանը, ինչպես նաև տվյալ հատվածի առավել արդյունավետ օգտագործմանը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու, հողամասերի սեպաձևությունը վերացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ